№ 100 Յունիսի 4 (16) 1881 Յունիսի 4 (16) № 100

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստացարարագրագիր պիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նշանաւոր խնդիր։—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երեւանից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։ Անգլիա։ Ֆրանսիա։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑԱԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մոսկվայի հնագիտական ժողով։

ՄԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԽՆԴԻՐ

—

„Մշակի“ ներկայ համարում տպում ենք Երեւանից ստացած մի նամակ, որ խօսում է մի շատ նշանաւոր խնդրի մասին, այն է կալուածական խնդրի մասին։

Մենք հիմնվելով մի թղթակցութեան վրա, որ առաջին անգամ ջանում է պարզել կալուածական խնդիրը Անդրկովկասեան երկրի հայերով ամենախիտ բնակեցրած մի նահանգի մէջ, դեռ ևս չենք կարող մեր կողմից մի որ և է վճռողական միտք յայտնել այդ նշանաւոր և կենսական խնդրի մասին։ Մենք պէտք է սպասենք որ խնդիրը աւելի բազմակողմանի կերպով քննվի, մշակվի և պարզվի։ Ինքն թղթակիցը խոստովանում է որ գուցէ նրա հաղորդածների մէջ մասնաւոր սխալներ կարող են լինել։ Այդ պատճառով մենք հրաւիրում ենք այլ անձանց, որոնք գուցէ աւելի տեղեակ են, բացատրել գործը աւելի մանրամասնաբար, որպէս զի մամուլը կարողանայ այլ և այլ թղթակցութիւններից կազմել իր գաղափարը և մշակել խնդիրը։

Ներկայ թղթակցութեան պէս թղթակցութիւններ գիւղական կալուածների, գիւղացիների և կալուածատէրերի փոխադարձ յարաբերութիւնների մասին երբէք չեն եղել մեր ազգային մամուլի մէջ։ Իսկ հողի կալուածական խնդիրը ամենանշանաւոր խնդիր է մի երկրի անտեսական ապագայի համար։

Անտես առնել այդ տեսակ խնդիրներ, որոնք հիմք են կազմում նոյն իսկ ժողովրդի, ազգի կեանքի,—նշանակում է անտես առնել նոյն իսկ ժողովրդի կեանքը նրա բոլոր բարոյական և մտաւորական ձգտումներով և արտայայտութիւններով։

Մի ազգի տնտեսական կեանքից կախված է նրա մտաւոր և բարոյական կացութիւնը։ Մենք խօսում ենք անդադար կըրթութեան, գպրոցների, ազգի բարոյական և մտաւոր զարգացման մասին։ Բայց նոյն իսկ այն գպրոցները, որոնք կազմում են հայոց ազգի զարգացած մասի հոգացողութեան առարկաներից գլխաւորը, ի՞նչպէս կը կարողանան գոյութիւն ունենալ, եթէ ազգի տնտեսական դրութիւնը նեղված կը լինի, կամ մշտապէս անորոշ և անցողական դրութեան մէջ կը գտնվի, ի՞նչպէս այդ գպրոցները գոյութիւն կունենան, եթէ, օրինակի համար, կալուածատէրը կը քանդվի, իսկ գիւղացին, թէև անունով սեփականատէր կը դառնայ, բայց իրապէս կախված կը լինի մի վաշխառուից, որի ձեռքը հեռվհեռվ կանցնի գիւղացու հողը իր չը վճարված պարտքերի համար։

Մենք խնդրում ենք Երեւանի մեր թղթակիցներին, և առհասարակ նրանց, որոնք մանրագէտներ են իրաւաբանական հարցերում, անընդհատ թղթակցութիւններով բացատրել մեզ նահանգի կալուածական խնդրի էութիւնը։

Ցաւալի է որ մեր իրաւաբաններից, համալսարանականներից ոչ մինը երբէք չէ մտածել այդ նշանաւոր, կենսական խնդրի վրա թղթակցել մեր լրագիրներից մինին։ Իսկ մեր միւս թղթակիցները միշտ զբաղված էին գպրոցներով, հոգաբարձուներով և հոգեւորականներով։

Թող չը մտանան մեր թղթակիցները այն սկզբունքը, որ մենք հազար անգամ յայտնել ենք։ այն է որ ազգութեան գոյութեան գլխաւոր հիմքը հայրենիքն է (հողը) և մայրենի լեզուն։

Երբ որ առաջինը, հողը, անհաստատ յարաբերութիւններ է ներկայացնում, իսկ երկրորդը (լեզուն) կորած է, ինչքան էլ ազգութիւնը պինդ պահի իր կրօնը, նա այլ ևս ազգութիւն չի լինի, այլ կը լինի մի կրօնական ազանդ միայն։

Այդ պատճառով մի ազգութիւն որ հիմնվում է հողի վրա և ունի մի կենդանի մայրենի լեզու,—մի և նոյն է ինչ կրօնի է պատկանում։ Ի հարկէ կրօնը բարոյականացնող, կրթիչ, զսպարարկող միջոցներից մին լինելով, պէտք է ազգի իր պաշտօնին հասնելու համար ունենայ բոլոր հարկաւոր յատկութիւններ։

Գ. Ա.

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Մայիսի 20-ին

Այս թղթիս վճռվում է Երեւանեան նահանգում մի շատ նշանաւոր խնդիր, այն է կալուածական խնդիրը։

Նախ քան թէ խօսեմ գիւղացիների այժմեան յարաբերութեան մասին դէպի կալուածատէրը և այն յարաբերութիւնների մասին, որոնք պէտք է հաստատվեն նոր կալուածական և դեռ ևս չի բազմաբնակված, բայց պրէկիսի մէջ գտնվող օրէնքի մասին, պէտք է մի քանի խօսքով բացատրեմ թէ ինչ դրութեան մէջ էր կալուածական խնդիրը Երեւանի նահանգում պարսից տիրապետութեան ժամանակ և ինչ դրութեան մէջ գտան առուները այդ նահանգի կալուածները, երբ տիրեցին Երեւանեան նահանգը։

Հողի սեփականութիւնը բացի ժառանգական հողերից, որոնց վրա չը կար գիւղական ազգաբնակութիւն, բոլորն էլ գիւղական համայնքի սեփականութիւն էր։ Այդպէս համայնքը (общинное владѣніе), հին հայոց, թէ պարսից հիմարկութիւնն էր,—այդ ես չեմ յանձն առնում վճռելու։ Միայն այսքան գիտեմ, որ Երեւանեան նահանգի բոլոր հողերը, որտեղ բնակված էր գիւղացին, թէ թվուլի և թէ մուլքադարի հողերը համայնքի հողեր էին։ Կալուածատէրը թէև իր հողի սեփականատէր էր, բայց նա չէր կարող կամայներով ծախել իր հողը, այլ միայն ամրագրեմամբ, այսինքն կարող էր ծախել իր կալուածական իրաւունքը ուրիշին։ Նա իկապես տէր էր ոչ թէ հողի վրա, այլ հողի արդիւնքի մի մասի վրա։ Մուլքադար կալուածատէրը տասնում էր կալուածի արդիւնքի 30 մասից 4 մաս, իսկ թվուլականը 30 մասից 7 մաս։

Գիւղացիները մշակում էին հողը համայնքի իրաւունքով և երեք տարին մի անգամ նոր բաժիններ էին անում իրանց մէջ։ Բայց 1870 թուից սկսած, երբ մոցնվեցաւ Ռուսական գրամատան ասված օրէնքը, գիւղական իրաւաբանչիւր ծուխին յատկացվեցաւ հողի մի յայտնի բաժին, որ և պէտք է մշակէր իրաւաբանչիւրը, առանց փոփոխելու թէչն մուլքադարի իրաւունքը նոյնը մնաց։

Այժմ կազմված է Գլխաւոր կառավարութեան մէջ մի յանձնաժողով, որ պէտք է մշակի նոր յարաբերութիւններ գիւղացիների և կալուածատէրերի մէջ։ այժմ մշակվում է մի օրէնք, որի զորութեամբ իրաւաբանչիւր գիւղացին պէտք է յետ գնի իր հողի կորը կալուածատէրից։

Պարզ է որ նախ քան գիւղացին մէջտեղ ունենայ յետ գնել իր հողի կորը կալուածատէրից, պէտք է գնահատվին հողերը։ Եւ ահա յանձնաժողովը բաժանել է Երեւանեան նահանգի բոլոր հողերը երեք տեսակի վրա. հողերի առաջ անդամ և Լազարեան արեւելեան լեզուաց ճեմարանի պրոֆէսոր, պ. Լիմին, իրան նպատակ էր դրել ուշադրել հայկական ժամանակագիր Մովսէս Խորենացուն, և նրա հետ միասին ներկայացնում գոյութիւն ունեցող հայ ժողովրդի պատմութիւնը։ Մովսէս Խորենացուն պ. Լիմինը ցոյց էր տալիս որպէս խարեբայ, քիչ էր մնում որպէս գրականական գող, որը իր ժամանակագրութիւնը կազմելու միջոցին օգուտ էր քաղել նրանից։ Բանը նրանումն է, որ Մովսէս Խորենացին անդադար յիշատակում է ասորեստանցի ժամանակագիր Մարաբասին, որը, իր կողմից, նիւթեր էր քաղում հին Նինուէում գտնված պահարաններից։ Պ. Լիմինի կարծիքով. Մովսէս Խորենացին չատ բաներին Մարաբասով մեկնութիւն տալով, պարզվեցրեց, անիմաստ կերպով ասում էր խօսում, որովհետև Մովսէս Խորենացու օրերում թէ Մարաբասը և թէ Նինուէական արխիվները վաղուց գոյութիւն չունէին, և, հետեւաբար, ոչ մի տեղից օգուտ քաղել չէր կարելի։

Թէ պատմական ինչպիսի հիմունքների վրա հասաւ պ. Լիմինը իր նորանշան եզրակացութիւններին—դժուար է որոշել. բայց ներկայ դէպքում մէկ բան անկասկած է, այն է, որ պ. բէֆէրենցը ինքն ևս չէր հասկանում, թէ ինչ էր ասում։ Ներկայ եզրակացութիւնից մէկի հարցմունքին, թէ կայ արդեօք հայ ժողովրդի պատմութիւն, որովհետև, ոչնչացնելով Մովսէս Խորենացուն, պ. Լիմինը երկրի երեսից ջնջում է հայոց Նեմսոր-ժամանակագրին, պ. Լիմին բացականչեց. «Այո, հայ ժողովրդի պատմութիւնը կայ, բայց միայն այլ ազգութիւնների»։

Ցանկալի կը լիներ որոշել հետեւանքը. եթէ բոլոր լուսաւորված աշխարհին յայտնի Մովսէս Խորենացին սկզբից մինչև վերջը անխզբաար սուտ էր խօսում, ուրեմն ինչ երաշխաւորութիւն կայ, որ պ. Լիմինի ցոյց տուած ժամանակագրները գործին բարեխղճաբար են վերաբերվել։ Հարց ծագեցաւ, թէ ո՞րտեղից էր վերցնում Մովսէս Խորենացին իր պատմագրութիւնները պ. բէֆէրենցը կարճաբառ պատասխանեց՝ «ժողովրդական էպոպեայ»։ Շատ լաւ է։ Լաւ է նրա համար, որ կարճ է, իսկ կարճ է նրա համար, որ բոլորովին պարզ չէ։ Ինչ կը վերաբերի մեզ, պ. Լիմինից մինչ այժմ բաւական ենք. նրա ընթերցանութիւնը Մովսէս Խորենացու մասին—արդարև հնագիտական հազվագիւտ երեւոյթ է։

Լիմինից յետոյ կարդաց պ. Բարսով, ժամանակագիրների հիման վրա ապացուցանելով, որ ալաններները—եասներ են, իսկ սկիւթացիք—պեչենեգներ։ Վերջի ի վերջոյ, աւելացրեց պ. Բարսով, Կովկասի այժմեան օսերը հին ալանների սերունդներն են, որոնց մասին էլ պ. Մանվելովի յիշեց իր բէֆերատի մէջ։

Չը հաճատակվելով պ. Բարսովին, կը յիշեցնենք նրան, որ ալանները կամ ազվանները Կովկասեան մեծ Գօսթի երկու կողմին էին բնակվում մինչև Կասպեան ծովի արեւմտեան ափի վերջը—այս առաջին, երկրորդ, կովկասեան մեծ գօսթի այժմեան ազգաբնակութիւնը խօսում է 35 լեզուներով և 40-ից մինչև անգամ աւելի բարբառներով. հետեւաբար, հաստատել, որ օսերը—ալանների միակ սերունդներն են, կամ որ օսերը և ալանները—մի և նոյն բաներն են, մի և նոյնը կը լինի, եթէ մենք սկսինք հաստատել, որ Մովսէս Խորենացին և Նիկողայոս Լիմին մի և նոյն անձնիք են։ Համարձակվում ենք հաստատելու պ. Բարսովին, որ ներկայ հանգամանքում նոյնքան ուղիղ կը լինենք մեր ենթադրութիւնների մէջ, որքան և նա իր ենթադրութիւնների մէջ։

Կովկասը, անկասկած, ժողովրդների փեթակ է։ Ուսիայից դէպի Եւրոպա ժողովրդների մեծ գաղթականութեան ժամանակ, իրաւաբանչիւր անցնող խումբը ճանապարհի վրա թողնում էր իր մնացորդներին։ Այդ պատճառով Կովկասի տեսակցութիւնը զանազանակերպ և գունագոյն է։ Հարկաւոր է նորագոյն և տարաբնակագոյն բատրբլի լինել, Կովկասում բնակվող զանազանացեղ և զանազանալեզու ժողովուրդների խումբը կարգի դնելու համար։ Եթէ պ. Բարսով չէ կամենում, պրոֆէսոր Լիմինի նման, պատմութեան ծնօտները փշրել, այն ժամանակ նա պարտաւոր էր աւելի զգոյշ խօսել։

Ժամի 10-ին թէ 11-ին հասարակութիւնը ցրվեցաւ, խօսելով այն թշուառ վիճակի մասին, որին ենթարկվեցաւ Մովսէս Խորենացին, և այդ առարկայի առիթով պ. Լիմինի նոր հեղինակութեան մասին, որ չուտով լոյս կը տեսնի, եթէ չեմ սխալվում, Մոսկվայի հնագիտական ընկերութեան աշխատանքների մէջ։

* * *

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ՄՈՍԿՎԱՅԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

—

«Голосъ» լրագրում կարդում ենք հետեւեալը։

Ամարային արձակուրդներից առաջ Մոսկվայի հնագիտական ընկերութեան վերջին նիստը կայացաւ։ Մի քանի հարցեր վճռելուց յետոյ, կարդացվեց կարգը հոգեոր սեմինարիայի պրոֆէսոր Մանավելովին հասաւ։ Նրա կարդացածքը ծագերի մասին էր, կամ, ինչպէս պ. Մանավելովին ուզեց Լազարեան ճեմարանի պրոֆէսոր պ. Լիմին «ծայրերի» մասին։ Հարց ծագեց. արդեօք ծայրերը (հայկական ծագումի ժողովուրդ) ուզղափառ էին, թէ ս. Գրիգոր լուսաւորչի գոգից հեռացած հայլուսաւորչականներ։ վճռեցին, որ ծայրերը մինչև անգամ առանձին ինքուրոյն ժողովուրդ կամ ցեղ չեն, այլ միայն կրօնական ազանդ են կամ, շատ կարելի է, ալանների սերունդն են միայն։

Պրոֆէսոր Լիմինի հանդիսաւոր ընթերցանութեան բովանդակութեան հասան, որը վաղուց յայտնի է ռուս ընթերցող հասարակութեանը այն բազմազան զրուածքներով, որ նա ժամանակ առ ժամանակ ընծայում է նրանց Կովկասի հնագիտութեան և պատմութեան հարցերի վերաբերութեամբ։ Պ. Լիմինը կարդում էր բարձր, պարզ, և չեշտելով։ Մոսկվայի հնագիտական ընկերութեան

Ցանկալի կը լիներ որոշել հետեւանքը. եթէ բոլոր լուսաւորված աշխարհին յայտնի Մովսէս Խորենացին սկզբից մինչև վերջը անխզբաար սուտ էր խօսում, ուրեմն ինչ երաշխաւորութիւն կայ, որ պ. Լիմինի ցոյց տուած ժամանակագրները գործին բարեխղճաբար են վերաբերվել։ Հարց ծագեցաւ, թէ ո՞րտեղից էր վերցնում Մովսէս Խորենացին իր պատմագրութիւնները պ. բէֆէրենցը կարճաբառ պատասխանեց՝ «ժողովրդական էպոպեայ»։ Շատ լաւ է։ Լաւ է նրա համար, որ կարճ է, իսկ կարճ է նրա համար, որ բոլորովին պարզ չէ։ Ինչ կը վերաբերի մեզ, պ. Լիմինից մինչ այժմ բաւական ենք. նրա ընթերցանութիւնը Մովսէս Խորենացու մասին—արդարև հնագիտական հազվագիւտ երեւոյթ է։

Լիմինից յետոյ կարդաց պ. Բարսով, ժամանակագիրների հիման վրա ապացուցանելով, որ ալանները—եասներ են, իսկ սկիւթացիք—պեչենեգներ։ Վերջի ի վերջոյ, աւելացրեց պ. Բարսով, Կովկասի այժմեան օսերը հին ալանների սերունդներն են, որոնց մասին էլ պ. Մանավելովի յիշեց իր բէֆերատի մէջ։

Չը հաճատակվելով պ. Բարսովին, կը յիշեցնենք նրան, որ ալանները կամ ազվանները Կովկասեան մեծ Գօսթի երկու կողմին էին բնակվում մինչև Կասպեան ծովի արեւմտեան ափի վերջը—այս առաջին, երկրորդ, կովկասեան մեծ գօսթի այժմեան ազգաբնակութիւնը խօսում է 35 լեզուներով և 40-ից մինչև անգամ աւելի բարբառներով. հետեւաբար, հաստատել, որ օսերը—ալանների միակ սերունդներն են, կամ որ օսերը և ալանները—մի և նոյն բաներն են, մի և նոյնը կը լինի, եթէ մենք սկսինք հաստատել, որ Մովսէս Խորենացին և Նիկողայոս Լիմին մի և նոյն անձնիք են։ Հարձակվում ենք հաստատելու պ. Բարսովին, որ ներկայ հանգամանքում նոյնքան ուղիղ կը լիներ մեր ենթադրութիւնների մէջ, որքան և նա իր ենթադրութիւնների մէջ։

Կովկասը, անկասկած, ժողովրդների փեթակ է։ Ուսիայից դէպի Եւրոպա ժողովրդների մեծ գաղթականութեան ժամանակ, իրաւաբանչիւր անցնող խումբը ճանապարհի վրա թողնում էր իր մնացորդներին։ Այդ պատճառով Կովկասի տեսակցութիւնը զանազանակերպ և գունագոյն է։ Հարկաւոր է նորագոյն և տարաբնակագոյն բատրբլի լիներ, Կովկասում բնակվող զանազանացեղ և զանազանալեզու ժողովուրդների խումբը կարգի դնելու համար։ Եթէ պ. Բարսով չէ կամենում, պրոֆէսոր Լիմինի նման, պատմութեան ծնօտները փշրել, այն ժամանակ նա պարտաւոր էր աւելի զգոյշ խօսել։

Ժամի 10-ին թէ 11-ին հասարակութիւնը ցրվեցաւ, խօսելով այն թշուառ վիճակի մասին, որին ենթարկվեցաւ Մովսէս Խորենացին, և այդ առարկայի առիթով պ. Լիմինի նոր հեղինակութեան մասին, որ չուտով լոյս կը տեսնի, եթէ չեմ սխալվում, Մոսկվայի հնագիտական ընկերութեան աշխատանքների մէջ։

* * *

ջին տեսակը յանձնաժողովը, որքան յիշում եմ, գնահատել է դեսյատինը 50—52 ռուբլ, երկրորդ տեսակը 20—25 ռուբլ, իսկ երրորդ տեսակը 20 ռուբլուց սաղ։ Եւ մեծ մասամբ գիւղացիներին յետ գնելը հեշտացնելու համար յանձնաժողովը Երեւանեան նահանգի հողերը գնահատել է երկրորդ տեսակի չափով, իսկ առաջին տեսակի գնով չատ փոքր թիւով հողեր է նշանակել, այն ինչ Երեւանեան նահանգում հողերը շատ սակաւ, շատ թանգ և շատ բերրի են, այնպէս որ այն հողերը, որոնց յանձնաժողովը գնահատել է 50 ռուբլ դեսյատինը, իրակապէս արժէն չատ անգամ 500 ռուբլ դեսյատինը։ Զանազանութիւնը ուրեմն անգին է, ինչպէս տեսնում էք։ Հողերի այդ տեսակ պակաս գնահատութիւնը, եթէ ընդունվի կառավարութիւնից, նրանց մեծ վնաս կը տայ կալուածատէրերին։ Նրանցից շատերը կատարելապէս կը քանդվեն, կաղքատանան։ Բայց մի և նոյն ժամանակ և այդ էժան գնահատութեամբ գիւղացիները հազիւ թէ կարողանան յետ գնել հողերը, առանց դիմելու մի որ և է փոխառութեան։

Այդ պատճառով կալուածատէրերը, որոնք այդ առաջարկութիւնը անարդար էին համարում, ուզարկեցին իրանցից մի պատգամաւորութիւն Թիֆլիս։ Նրանք ասում են. էժան թէ թանգ գնահատվին հողերը,— գիւղացին շատ դժուարութեամբ կը կարողանայ յետ գնել իր կասը հողը, քանի որ կառավարութեան կողմից նրան դրամական օժանդակութիւն չէ տրվելու իր հողը յետ գնելու համար, այլ նա պէտք է յետ գնի իր սեփական միջոցներով։ Եւ այդ պատճառով Գիւխաւոր Կառավարութեան յանձնաժողովը աշխատել է էժան գնահատել։ Բայց չափից դուրս էժան գնահատելով հողերը, կալուածատէրերը կատարելապէս կը քանդվեն և այդ էժան գնով էլ գիւղացին չի կարողանայ յետ գնել իր հողը, սոփոված կը լինի մի որ և է փոպոիրով մտա փոխառութիւն անել, կը դառնայ կախված այն մարդուց, որից փողը ստանում է ստացել և վերջը ինքն էլ կը քանդվի, որովհետև չի կարողանայ տոկոսները վճարել և ժամանակով գիւղացու հողը կանցնի վաշխառուի ձեռքը։ Կալուածատէրերը ասում են. համ մենք կաղքատանանք, համ գիւղացին վերջը կը քանդվի,— իսկ հողերը կանցնեն հարուստ վաճառականների ձեռքը։ Այդ պատճառով կալուածատէրերը առաջարկում են հետեւեալը։ Իրաքանչիւր կալուածքի երկու երրորդականը պատրաստ են առանց փողի, առանց վարձատրութեան զիջանել գիւղացիներին և այդ հողը կը դառնայ նրանց համայնքի սեփականութիւն, իսկ կալուածի մի երրորդականը թող մնայ որպէս կալուածատիրոջ սեփականութիւն։ Եւ այդ ձեւով բաժանելը շատ հեշտ է անելու, քանի որ Երեւանեան նահանգի իրաքանչիւր կալուածը բաժանված է ախչա ասված 6 հաւասար մասի վրա։ Դնելով հողի մեծութիւնը կամ փոքրութիւնը ախչան կարող է այլ և այլ հողերի մէջ համեմատաբար մեծ կամ փոքր լինել, բայց մի կալուածի մէջ բոլոր վեց ախչաները միմեանց հետ հաւասար են։ Դա ուրեմն մի իդեալական չափ է։ Այդպիսով իրաքանչիւր կալուածի 6 ախչայից, կալուածատէրերի առաջարկութամբ, 2 ախչա պէտք է մնայ կալուածատիրոջ, իսկ 4 գիւղացիներին։ Այդպիսով ոչ յետ գնելը կը հարկաւորվէր, ոչ էլ կալուածատէրերը վտանգի մէջ կը լինէին ազքատանալու, ոչ էլ գիւղացին հարկաւորութիւն չէր ունենայ իր անձնական հողն ունենալու համար գիմել փոխառութեանը անպէտ տոկոսներով, որ նրան անպատճառ կը քանդէր, մի և նոյն ժամանակ գիւղացիները կրկին կունենային համայնքի հողերը։

Եւ այդ հողային յարաբերութիւնները օրքան կարողացաց բացատրեցի ձեզ։ Դուցէ մի քանի սխալներ կան իմ բացատրութիւնների մէջ, բայց խնդիրը այնքան նշանաւոր է մեր ամբողջ նահանգի համար, որ չատ ցանկալի կը լինէր, եթէ ինձանից աւելի մասնագէտները աւելի էլ մանրամասնաբար բացատրէին մամուլի մէջ այդ խնդիրը, մինչև կոմիսիայի ձեռքով նրան վերջնական որոշում տալը։

Յաւելին այն է որ Գիւխաւոր Կառավարութիւնը չը պահանջից որ կալուածատէրերը իրանց ընտրած ներկայացուցիչներով մշակեն խնդիրը, կամ սկզբից ուզարկեն պատգամաւորներին, որոնք կարողանային մասնակցել կոմիսիայի աշխատանքներին, մանաւանդ աչքի առաջ ունենալով, որ մեր Անդրկովկասում դեռ ևս զէմստվոն մտցված չէ։

Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 2-ին յունիսի

Այսօրվայ «Մշակի» 98 համարում կարդալով պ. Յեմիրեանի նամակը, Եւրօպայում տրամաբանելի հայկական խնդրոյն վերաբերված մի օրգանի մասին, որ պարտը՝ ի խրախուսութիւն գործի սկսելու յաջողութեանը, նախապէս՝ բաժանորդագրելու նպատակը կը խնդրէ, որով ոչ ասկաս մի ինքնաբական յոյսեր է խոստացվում մի այդպիսի անհրաժեշտ գործի փոքրով ձեռնարկութեան յաջողելուն, զուցէ ձեր միջոցաւ, մենք՝ ռուսահայերս հայերս գոնա ջանացած կը լինենք մասով չափ պ. Դիւլօրէի նպատակի իրագործութեան խրախուսելու, ուրեմն, ցանկանալով իբրև հայ, այդ ազգութեան անհրաժեշտ գործի բարի իրագործութիւնը, այսու և մենք խնդրում ենք ձեզ, բարեհաճել նոյնպէս և մեզ այժմէն իսկ բաժանորդ նկատել յիշեալ լրագրին, գնելա երկու օրինակ։

Դէորգ Ազիզեանց, Ս. Եփեմեանց Ազիզեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 29 մայիսի

Մայիսի 29-ին պարոն Արաէն Թոխմանեանցը մի հրապարակախօսութիւն արեց Արծրունու թատրոնում։ Մենք, հայերս հոգի մեր ընկել երկրից, շատ անգամ գրաւված մեր առօրեայ նիւթական հարցերով, մոռանում ենք մտաբերել անգամ այն երկիրը, ուր մեր ազգի արմատն է մնում, ուր մեր ազգը իր մանկութիւնը և իր հասուն չրջանները է անցրել, ուր տեղի է ունեցել մեր ազգի ուրախութիւնը և սուգը, պատերազմը և կեանքը և ուր ազգը ժուռաւոր դեգերվում է այսօր տարկութեան մէջ։

Այդ օրը և միայն այդ օրը պարոն Թոխմախեանցը, որ անձամբ ուզեցին ճանապարհորդել է Հայաստան երկրում և ընտրել նրան զանազան տեսակէտներից, մեր աչքի առաջ բաց արեց իր հարստութեան քարտէզը, որի վրա պարզ նկարված տեսանք Հայաստանի կենտրոնը՝ վասպուրականի աշխարհը իր վան քաղաքով և Մանազկերտ, Խնուս և Բալանդ գաւառները, նրանց աշխարհագրական գիրքը, նրանց բարեբեր հողը, նրանց ամենայն տեսակի հանքերը, մետալ և ածուխ, նրանց բնութիւն գեղեցկութիւնը, անտառները իրանց կենդանական բնակիչներով։ Պարոն հրապարակախօսը ընդհանրապէս ունի մի քանի պարզ խօսքերով նկարել մի ամբողջ ազգի մտաւոր և բարոյական տիպը։ Դա մեզ տուեց զանազան գաւառների ազգաց վիճակագրութիւնը, որից երևեց հայերի անհամեմատ մեծ քանակութիւնը բոլոր այլ ազգաց վրա, միասին վերցրած, այն է՝ քրդերի, տաճիկների, ասորիների, հրէաների և չերքեզների։ Դա ցոյց տուեց մեզ հայի մտաւոր և բարոյական զարգացումը բոլոր այլ ազգաց վրա։ Վերջապէս նա ցոյց տուեց Հայաստանի հայերի մէջ գտնված այն ինքնուրոյն և միանգամայն անընկճելի ոյժը, որ պահել է և պահում է հայ ազգութիւնը, որի շնորհիւ մենք այսօր օրով մխիթարութեամբ ասում ենք թէ «մենք ևս ազգ ենք, մենք ևս հայրենիք ունենք»։

Ես ներողութիւն եմ խնդրում պարոն հրապարակախօսից, որ աղճատում եմ նրա միանգամայն սկեպտ դասախօսութիւնը, բայց և չեմ կարող չը խնդրել պարոնից, որ բարեհաճի մի գամ ևս դասախօսել և այս անգամ քանդ մեր առաջ այն բոլոր հարստութիւնը, որը դիպվել է նրա հայրենասէր սրտի վրա։ Մանաւանդ որ չատերը օրանք հոգով կը ցանկանան լսել այդ բոլորը։ Մայիսի 29-ին անգիտակցաբար բացակայ էին։

Բ. Նալբանդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Тифл. Объявл.» լրագիրը հաղորդում է որ պ. պ. Ա. Կօրգանով, Ա. Քրիգօնով և Փիթեվ եղբայրները նուիրեցին 13,200 ռուբլ երկու ըստիպնգիա հատատելու համար հիմնվելու կովկասեան համաչարանի մէջ կամ մի բարձրագոյն դպրոցի մէջ, որ կը հիմնվի Թիֆլիսում։

Մայիսի 30-ի գիշերը Քութայիսի մէջ հրդեհ եղաւ, որ ոչնչացրեց մի ամբողջ թաղի կէսը։ Տները մեծ են, թէև ճշդութեամբ դեռ ևս յայտնի չէն։ «Լեկոր» ապահովութեան ընկերութեան վնասը հասնում է 15,000 ռուբլ գումարի։ Միւս ընկերութիւնների վնասներն էլ անգին են։ Հրդեհը սկսվեցաւ գիշերվայ 3 ժամից։

Ս. Պետերբուրգի լրագիրները հաղորդում են որ կոմս Լորիս-Մելիքով ստանում է 26,000 ռուբլ տարեկան ռոճիկ։

Երեւելի բժիշկ Պիրոգովի յօբելեանը Մոսկվայում շատ փառաւոր էր։ Յօբելեանի ժամանակ ստացվեցաւ թագաւոր կայսրի հեռագիրը, որով նորին Մեծութիւնը շնորհաւորում էր Պիրոգովին և յիշում էր նրա արած ծառայութիւնները ռուսաց զօրքին։ Ներկայ էին այլ և այլ վարչութիւնների, համալսարանների և ընկերութիւնների ներկայացուցիչներ, նոյնպէս ազատամիտ մամուլի պատգամաւորները և հրէայ-ռուս չորս օրգանների ներկայացուցիչները, որոնք ազդէս ներկայացրին Պիրոգովին։ Ներկայացվեցան և ուրիշ շատ ազդէսներ Պիրոգով մի ճառ ասեց, որի վերջը յայտնեց յոյսը որ Ռուսաստանը կը չարունակի ընթանալ վերանորոգութիւնների ճանապարհով, որ գծագրված էր անցեալ թագաւորութեան ժամանակ։ Մոսկվայի համալսարանի ընկերությունը մի ճառ ասեց համալսարանի ինքնավարութեան և համալսարանների մէջ մտքի ազատութեան անհրաժեշտութեան մասին։ Երեսուներորդութիւնը ողջոյված կերպով ընդունեց այդ երկու ճառերը։

Շնորհակալութեամբ ստացանք «Երեւանի Նահանգի բաստանութիւնը զրքոյկը, աշխատասիրութիւն Յովհաննէս Աթանասեանցի։ Տպված է Երեւանում. «Պակ» լրագրի տպարանում, 1881 թ։ Գրքոյկի գինը 50 կոպէկ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Թիւրքաց մինիստրների խորհուրդը վրձռել է առաջարկել սուլթանին, որ նա 40,000 կանոնաւոր զօրք ուղարկի Տրիպոլի տեղական զօրքերի թիւը շատացնելու համար։ Բացի այդ կառաջարկվին վարչական վերանորոգութիւններ Տրիպոլիի վիլայեթի համար։ Այս միջոցները հազիւ թէ կարողանան բարելաւել Դրան յարաբերութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի հետ։

„Daily Telegraph.“ լրագրին կոչվածից հեռագրում են, որ Թիւրքաց զօրքերը հեռանում են Արտայից։ Լարիսսայի զօրքերը գնացին Սալոնիկի, իսկ սահմանների վրա եղած թիւրքաց զօրքերը դէպի հիւսիս ուղեւորվեցան։ Այդ լուրերին հակասում են „Հավասի“ ընկերութեան հեռագիրները, որոնք հաղորդում են, թէ թիւրքերը շարունակ ամրացնում են Արտա և Վլոր։ Եանինայի նահանգապետը գնացել է Պրեվեզա, որպէս զի համոզի տեղացիներին թշնամաբար վերաբերվել Յունաստանին։

Աբդուլ-Ազիզի սպանման մէջ մեղադրված բոլոր անձինք կը դատվին առանձին դատարանի մէջ, որ կազմված կը լինի թիւրքաց բարձրագոյն պետական մարդիկներից։ Դատարանի նախագահ նշանակված է Բրուսսայի նահանգապետ և նախկին առաջին մինիստր Ահմեդ-Վեֆիկ-փաշա։ Դատաստանը բաց կը կատարվի։ Վեֆիկ-փաշա Միտհադի աշխատակիցն էր Թիւրքաց սահմանադրութեան կազմելու ժամանակ և Թիւրքաց առաջին պարլամենտի նախագահը։

ԱՆԳԼԻԱ

Վերջին օրերում համայնքների ժողովի շինութեան անցքերը լիքն էին կանանցով։ Դրա պատճառն այն էր, որ համայնքների ժողովը պէտք է քննէր կանանց ընտրողական իրաւունքների ընդարձակելը։ Այդ առիթով վեսամինտերի դահլիճում մի ժողով կայացաւ, որի ժամանակ խօսեցին կանանց իրաւունքների ջերմ պաշտպան օրիորդ Լիդիա Բեկկեր և ուրիշ շատ օրիորդներ։ Նրանք պահանջում էին ընտրողական իրաւունք տալ անխտիր դրութիւն ունեցող կանանց, կամ այնպիսիներին, որոնք ընտանիքի մեծն են համարվում և ունեն այն բոլոր յատկութիւնները, որոնք Անգլիայի մէջ ընտրողական իրաւունք են տալի ազամարդկանց։ Այն օրը, երբ պէտք է քննվէր կանանց ընտրողական իրաւունքի հարցը, համայնքների ժողովի այն բաժինը, որ հասարակութեան համար է յատկացված, կանանցով լիքն էր։ Սրինագիծը առաջարկել էր Հիւգ Մեգոն, որ այդ օրը հիւանդութեան պատճառով չը կարողացաւ պաշտպանել իր առաջարկութիւնը և խնդրից ժողովից յետաձգել օրինագծի քննութիւնը։ Ժողովը կատարեց նրա խնդիրքը և օրոշեց օրինագիծը ուշներից յետոյ քննել։

Իրլանդական կալուածական միութեան ժողովը կայացրել է հետեւեալ ճշմարը. „Իրլանդական ֆերմերներին մեծ չափերով արտաքսելը իրանց հողերից, արտաքսելու ժամանակ զինուորական ոյժի գործադրելը և իրլանդական միութեան առաջնորդների կալանաւորելը փկայում են, որ կառավարութիւնը Իրլանդիայի մէջ գործադրում է արտաքսյ կարգի օրէնքները կալուածատէրերին պաշտպանելու և երկրագործներին հալածելու համար։ Այս հիման վրա մենք հրաւիրում ենք Անգլիայի և Շոտլանդիայի մէջ բնակվող իրլանդացիներին, նոյնպէս և հարաբերվածներին համակրող անգլիացիներին ժողովրդական ցոյցեր կազմակերպել հասարակական կարծիքը արթնացնելու համար“։ Այդպիսի առաջին ցոյցը տեղի կունենայ Լոնդոնում Հայդ-պարկի մէջ յունիսի 5-ին։

Կալուածական միութեան գլխաւոր առաջնորդներին կալանաւորելուց յետոյ միութեան գլուխն է անցել իրլանդական հանրապետութիւնը։ Ինչպէս պատմվում է մի ֆերմերի արտաքսելը, այնտեղ գալիս են մի ֆերմերի արտաքսելը, առաջնորդում են ամբոխին և զգուշացնում են նրան ի զուր տեղ չը յարձակվել զօրքերի վրա։ Հանրապետութիւնը կրկնակի նպատակ ունի՝ մի կողմից ժողովրդական շարժում կազմակերպել և միւս կողմից ցոյց տալ թէ նա ամենահարում է և չափաւորում է ամբոխին։ Գրգռուածի օրինագծի մասին հոգեւորականները գանգատ կարդիք են յայտնում մի բանի մէջ։ Նրանք համաձայն են, որ բոլոր միջոցները պէտք է գործադրել իրլանդական ժողովրդի բարօրութեան համար։ Հոգեւորականները շատ դէպքում կարողացել բանաւորութիւնը շատ դէպքում ամբոխ զգուշացնել և զսպել կատաղած ամբոխին։ Նոթերումս 12,000 իրլանդացիք հալածվել էին մի ֆերմերի արտաքսելուն ընդդիմանալու համար։ Երբ 250 պոլիցիական մեծամարդիկ համար։ Երբ 250 պոլիցիական մեծամարդիկ զօրաբաժնի հետ կամենում էին արտաքսել ֆերմերին, ամբոխը նրանց կատարելապէս քարկոծեց։ Զինուորները